

ՎԱՏԻԿԱՆԻ ԱՌԱՔԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ XVII ԴԱՐԻ ԱՆԱՆՈՒՆԸ ԵՎ
ՑԻՒԼԻՊՈՒՊՈՒՍՈՒՄ ՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ Ն. ԴԵՐՈՎԸ
ՐՈՒՂՎԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՎԼԻԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Մ. ԲԱՐԹԻՅԱՆ

Բուլղարիայի Գիտությունների ակադեմիայի «Կիրիլոսյան-Մեթոդիոսյան Կենտրոնի» Palaeobulgarica («Старобългаристика») գիտական հանդեսի 1996 թ. 4-րդ համարում լույս է տեսել Յոհանես Սպիսարևսկայի La «Relazione del Regno di Bulgaria» Anonyme de la Bibliolheque Apostolique Vaticane (Codex Barberinianus latinus 5305) («Բուլղարիայի թագավորության նկարագրությունը»: Վատիկանի Առաքելական գրադարանի Անանուն: Բարբերինի լատիներեն ֆոնդի թիվ 5305 ձեռագիրը) խորագիրը կրող հոդվածը: Ուսումնասիրությունը կատարված է ֆրանսերեն, աղբյուրը բերվում է ընագրի՝ իտալերեն լեզվով, որին կցված է հոդվածագրի իրականացրած բուլղարերեն թարգմանությունը:

1933—1936 թթ. Վատիկանի Առաքելական գրադարանի ձեռագրատանը անվանի բուլղար միջնադարագետ-բյուզանդագետ Իվան Դուլչևը Բարբերինի ֆոնդի լատիներեն ձեռագրերի մեջ հայտնաբերել էր «Բուլղարական թագավորության» մի նկարագրություն: Քաջատեղյակ լինելով Սոֆիայի կաթոլիկ արքեպիսկոպոս Պետրո Բոգդանի «De Propaganda Fide» («Հավատո պրոպագանդայի») միաբանության 1640 թ. ուղարկած «Visita della Bulgaria» («Այցելություն Բուլղարիայի») և դեռևս 1887 թ. է. Ֆերմենզինի հրատարակած¹ նշանավոր զեկուցագրին, պատմաբանը «Relatione»-ի և «Visita»-ի առանձին էջերի միջև նկատեց նմանություններ: Պետրո Բոգդանի Ձեկուցագրի բուլղարերեն թարգմանությունն իրականացնելիս, Ի. Դուլչևը նշեց, թե այդ Ձեկուցագրի մի հատված տեղ է գտել Codex Barberinianus latinus № 5305-ում: Նա միաժամանակ ցույց տվեց, որ Պ. Բոգդանի «Visita della Bulgaria»-ի և «Relazione del Regno di Bulgaria»-ի միջև առկա են տարբերություններ²:

Յո. Սպիսարևսկան, աշխատելով վերոհիշյալ գրադարանի նույն ֆոնդերում, հանգեց այն եզրակացության, որ Վատիկանի Անանուն «Relazione»-ն չի ներառում Սոֆիայի արքեպիսկոպոսի «Visita»-ի մի հատվածը նախնական ձևով և առանց փոփոխությունների, այն դրա համառոտ շարադրանքը չէ, որ երկու ձեռագրերը տարբերվում են միմյանցից լեզվական բաղում մանրամասնություններով, ոճով և կազմությամբ: Առկա են ամբողջական հատվածներ, որոնք Պ. Բոգդանի 1640 թ. Ձեկուցագրում բացակայում են և տալիս են «Relazione»-ի թվագրումը դուրացնող կարևոր փաստեր: Հոդվածագիրը հանգում է այն եզրակացության, որ «Relazione»-ի հեղինակը ազգությամբ բուլղար չէ, «Propaganda Fide»-ի³ կողմից ուղարկված մի օտարազգի: Կանգ առնելով «Relazione»-ի Անանուն հեղինակի աղբյուրների վրա, հոդվածագիրը գրոտ-

¹ E. Fermendzin, Acta Bulgariae ecclesiastica a. 1565 usque ad a. 1799.—Monumenta spectantia historiam Slavorum meridionalium, 18, Zagrabiae, 1887, p. 68—95.

² И. Дуичев, Описанието на България от 1640 г. на архиепископа Петър Богдан. Архив за посветени проучвания, 2, 1939, с. 174—210.

³ Լրիվ անվանումն է Congregatio cardinalium de Propaganda Fide (Հավատո տարածմանը նպաստող կարգինների կոնգրեգացիա), Հիմնադրվեց 1597 թ. Կղեմես VIII պապի կողմից և կազմակերպվեց Գրիգոր XV-ի կողմից 1622 թ.: Միսիոներներ էր առաքում, նշանակում եպիսկոպոսներ, վիկարիոսներ՝ այլադավան երկրներում:

նում է, որ նա օգտագործել է դեռևս անհայտ առանձին նամակներ և զեկուցագրեր: Բայց հանվանն մի գործ նա նշում է: Անանունը որպես սկզբնաղբյուր օգտագործել է Դյուրացցոյի⁴ կաթոլիկ արքեպիսկոպոս Մարկո Սկուրայի (1640—1657 թթ.) հեղինակած Բուլղարիայի նկարագրությունը:

Անդրադանալով «Relazione»-ի գրության ժամանակին, Յո. Սպիտարևսկան գտնում է, որ այն պիտի շարադրված լինի 1656—1674 թթ. միջև: Այն տալիս է նոր ու հետաքրքիր տեղեկություններ բուլղար և պավլիկյան կաթոլիկների համայնքների, նրանց թվաքանակի, զբաղմունքի, եկեղեցիների ու հոգևորականության մասին XVII դ. 60—80-ական թթ.: Վերջին հաշվով Անանունն իր Զեկուցագրում այդ նպատակն էլ հետապնդում էր՝ ամենայն հավանականությամբ կատարելով «Propaganda fide»-ի պատվերը:

Անանունի նպատակը, ինչպես ասվեց, ցույց տալն էր, թե Բուլղարիայի ամբողջ տարածքի կոնկրետ որ վայրերում կային կաթոլիկ համայնքներ: Դրա հետ մեկտեղ «Relazione»-ում խոսք է լինում Բուլղարիայում բնակվող ազգային փոքրամասնությունների մասին, այդ թվում և ճալների, ինչպես նաև «պավլիկյանների ազգի» կամ «պավլիկյանների ժողովրդի» (Nazione Paoliana կամ Popoli Paoliani):

Սույն հոդվածում այդ աղբյուրից մեջբերելու ենք հայերի և պավլիկյանների համայնքներին վերաբերող առավել կամ պակաս ծավալով հատվածներ և ոչ համայն Բուլղարիային, որը թեև Զեկուցագրում, «Թագավորություն» (Regno) է կոչված, բայց օգտագործված է «երկիր» իմաստով: Անանունը շատ լավ գիտե, որ տվյալ պահին Բուլղարիան գտնվում է թուրքական տիրապետության ներքո:

«Այս Թագավորությունը», — գրում է Անանունը, — շատ մեծ է, բնակեցված է թուրքերով, ուղղափառ բուլղարներով⁵, հույներով, ճալներով, հրեաներով և մեծածիճ կաթոլիկներով: Հատուկ հիշվում է «պավլիկյան ժողովուրդը» կամ «պավլիկյան ազգը»: Այն համարվում է առանձին ժողովուրդ. ժամանակի մարդկանց, անգամ իրենց՝ պավլիկյանների համար ծագումն անհայտ:

Վառ գծերով է նկարագրված Սոֆիան: Առանձին հիշվում են քաղաքում բնակվող հայերը՝ երկուսի բաժանված: Նրանք 200 տուն են, ունեն երկու եկեղեցի, և մի մասը մյուսին համարում է հերձվածող:

Սոֆիայից հետո Անանունը նկարագրում է Ֆիլիպուպոլիս (Պլովդիվ) քաղաքը: Սոֆիայի նման ևս անպարիսպ, տեղադրված է Մարիցա գետի ափին, բլրի վրա: Քաղաքում կա թուրքերի, ուղղափառ բուլղարների և հույների 6.000 տուն, կաթոլիկների՝ երկու՝ առանց եկեղեցու: Վերջիններս իրենց պատարագը ստիպված են կատարել պավլիկյանների հարևան գյուղում գտնվող աղքատիկ մի եկեղեցում:

Անանունն այնուհետև խոսում է Դանուբ գետի ափին, Վալախիայի սահմանին, բլրի վրա գտնվող «Ռուխչի» (Ruhcic) քաղաքի մասին: Այնտեղ բնակվող հայերը 200 տուն են՝ բոլորը վաճառական: Զույն են ժողովարան:

⁴ Նավահանգիստ Ագրիատիկ ծովի ափին, այժմ Դուրես Ալբանիայում, հին հույների էպիդամնոսը: XII դ. վերջում այստեղ հավանաբար եղել է հայկական համայնք: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Բյուզանդական աղբյուրներ, գիրք 9, Հովհաննես Սկիլիցես: Թարգմանություն բնագրի, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1979, էջ 322, ծանոթ. 324:

⁵ Իտալերեն բնագրում այս բուլղարները ամենևին էլ «ուղղափառ» (պրավոսլավ) չեն հորշորվում, այլ ամենուրեք՝ «Bulgari scismatici»-հերձվածող բուլղարներ: Հստ կաթոլիկների տրամաբանության, ուղիղ դավանանքը միայն իրենք ունեն, մնացածները աղանդավոր-հերձվածողներ են: Սույն հոդվածում, երբ խոսք է լինում ուղղափառ բուլղարների մասին, պիտի գիտենալ, որ խալիերեն բնագրում միշտ Bulgari scismatici է:

⁶ Բնագրում՝ sinagoga, բայց պարզ է, որ բառն օգտագործված է «ժողովարան» իմաստով, և ոչ հրեաների տաճարի:

Խոսելով Հարագրադ (Harasgrad)⁷ քաղաքի մասին, Անանունը նշում է, որ հայերը 70 տուն են, շունեն եկեղեցի, և բոլորը արհեստավորներ են:

Շումե (Sumian) քաղաքից հետո Անանունը անդրադառնում է «Հին Կոստանդնուպոլիս» քաղաքին, որը թուրքերն անվանում են «Էսկի Ստամբուլ» (Eschislainbol): Այն գտնվում է Շումենից, հինգ մղոն հարավ: Սլավոններն այն անվանում են Պրիսլավան (Prislauan)⁸, իսկ լատինական անվանումն է Մարկիանուպոլիս: Բնակչությունը կազմում է 300 տուն ուղղափառներ՝ իրենց փայտաշեն եկեղեցիով, 1000 տուն թուրք՝ յոթ մեծ մզկիթներով, չհաշված փոքրերը, և 40 տուն հայեր, որոնց համար եկեղեցու դեր է խաղում մի տուն:

«Relazione»-ում առանձին ու մանրամասն խոսվում է պալիկյանցեւի. նրանց ծագման մասին. «Ոմանք գտնում են,— գրում է Անանունը,— որ սերում են Իստիլայից հալածված աղանդավորներից: Անցնելով Ֆրիդի նահանգով, նրանք իստատավեցին Բոսնիայում, [այնտեղից էլ տեղափոխվեցին Միդիայի Նիկոպոլիս քաղաքը: Ուրիշների համաձայն, նրանց աղանդը սկիզբ է առնում Պողոս Սամոսատցուց: Նրանց ձեռագիր մատյանները գրված են կիրիլիցայով, ոչխարի կաշվի վրա և դեռ օգտագործվում էին Բոսնիայում և որոնցով կատարում էին պատարագը»¹⁰, Տվերտկո ցարի¹¹ ժամանակ, այսինքն, 400 տարվա հնություն ունենալու հետ աղբյուրի, հենց նաև, որ նրանց հավատքը Հռոմից է եկել, որտեղից այսօր ստացել են իրենց կորցրած ճշմարիտ լույսը, այսինքն, կաթոլիկություն: Բայց և այնպես, Անանունին մեծ զարմանք է պատճառում այն փաստը, որ այդպիսի փոքրաթիվ ժողովուրդը, գտնվելով մեծաթիվ ուղղափառների շրջապատում, երկար ժամանակի ընթացքում համառորեն շարունակում է հաստատուն մնալ իր «մոլորություն» մեջ, այսինքն, դավանել սեփական աղանդը «Այսօր,— գրում է Անանունը,— նրանք համարվում են սլավոններ կամ բուլղարներ, քանի որ այլ լեզու չգիտեն»:

Պալիկյանները, «իրենց սովորության համաձայն», մկրտվում են Աստվածաշայտնության տոնին: Երբ եկեղեցի են գնում, քահանան վերցնում է մոմը, հպում այն մկրտվողի գլխի չորս մասին: Դա անվանում են մկրտություն սբ. Հովհաննես Մկրտչի բոցով: Այլ խորհուրդներ չունեն: Ով կարդալ գիտե, պալիկյանները կամ առավել տարեցները նրան տալիս են մի գավազան և հռչակում իրենց քահանան: Նա հոգ է տանում, որպեսզի ամուսնության հանդեսը կատարվի հետևյալ կերպ. երբ իրար են ագուցում նորապսակների ձեռքերը, քահանան սերտած մի քանի բառ է արտասանում, օրհնում նրանց բաժանելը, խմում դրանցից, արտասանելով հայտնի աղոթքներ: Այս ծիսակարգին անտեղյակը համարվում է անկիրթ: Նրանց ընդունած միակ գրքերն են յորս Ավետարանները, սբ. Պողոս առաքյալի թղթերը, Գործք առաքելոցը և Հովհաննու Հայտնությունը: Հսկում են Զատիկի պահքը, ուրբաթ օրվա պահքերը և Աստվածածնի տոնին նախորդող 15-օրյա պահքը: Հսկում են և կիրակի օրերին, մի քանի շաբաթական և այլ սեփական, ուրույն տոներին, ինչպես, օրինակ, սբ. Վարվառայի տոնին, սբ. աբբա Սավայի և այլ տոներին, համբուրում են խաչը: Իրենց եկեղեցիներում չկան սրբապատկերներ, քանի որ խորշում են սրբերից, բայց կան սեղաններ, որոնց վրա ձաշում են: Հավանաբար խոսքը ազասին է վերաբերում:

⁷ Զիֆոթել Ռազդարադի հետ, քանզի «Relazione»-ի վերջում հատուկ խոսվում է այս Ռազդարադի մասին և պարզվում է, որ Հարագրադի հետ ոչ մի առնչություն չունի:

⁸ Բուլղարական երկրորդ մայրաքաղաք Պրիսլավը հիմնադրված է 822 թ.: Առաջինը Պրիսլան էր:

⁹ Նիկոպոլիս պալիկյանների մասին Անանունը խոսում է հետո՝ առանձին:

¹⁰ Անկյունավոր փակագծերի մեջ առնված նախադասությունը, որ առկա է բուլղարերեն թարգմանության մեջ, իտալերեն բնագրի տպագիր տեքստում անուշադրության պատճառով դուրս է մնացել, որով աղավաղվել է Անանունի միտքը:

¹¹ Հավանաբար Բոսնիայի վոեվոդա Տվերտկո Վուկովիչը թուրքերի դեմ 1389 թ. հունիսի 15-ին Կոսովոյում տեղի ունեցած ճակատամարտի հերոսներից է:

Հստ Անանունի, պավլիկյանները կաթոլիկություն ընդունեցին Հռոմի պապ Պողոս V-ի օրոք (1605—1621 թթ.)՝ Պետրոս Սալինատի և սբ. Ֆրանցիսկոսի միաբանության՝ Բուլղարիայի կրտսեր եղբայրների ջանքերով:

Անանունը այնուհետև անցնում է Մառնոպոլի (Marnopoli) գյուղին, որը տեղադրում է Տոնովոյին մոտիկ: Այստեղ կա սբ. Երրորդությանը նվիրված եկեղեցի՝ առանց ծածկի և սրբապատկերների, բայց պավլիկյանների սովորությանը մեջտեղում կա ուտելիքներով լի սեղան, փաստ, որը վկայում է եկեղեցուն՝ պավլիկյաններին պատկանելու մասին: Այդ մասին է վկայում և նրանում սրբապատկերների բացակայությունը: Հստ Անանունի, այնտեղ բնակվում է 860 հոգի, որոնցից շատերը կաթոլիկ են մկրտվել գյուղի սբ. Ֆրանցիսկոսի միաբանության մի կրտսեր եղբոր ջանքերով: Դա պատճառ դարձավ, որ հիշյալ եղբայրը և «այդ ժողովրդից» (այսինքն՝ պավլիկյաններից) տասը հոգու սուլթանի հրամանով Տոնովոյի կառավարիչը բանտ նետի: Ի վերջո նրանք դուրսովնիկցի առևտրականների ջանքերով, 30 ռիալ կաշառքով, ազատ արձակվեցին: Այդ գյուղում կային և քսան տուն թուրքեր:

Գոռնո Լուծանի գյուղը գտնվում է Օսմ գետի մոտ: Այն շունի եկեղեցի, և պատարագը մատուցվում է մասնավոր տան մեջ: Բնակչությունը «հաղորդություն ստացող»¹² 400 հոգի կաթոլիկներ են և 83 երեխա, բոլորն էլ պավլիկյաններ: Կան և 12 տուն ուղղափառներ: Անցյալում, գրում է հեղինակը, այդ գյուղը գտնվում էր արքայական ճանապարհի վրա, դետի ափին, բայց քանի որ բնակիչները այլևս չէին կարող տանել անցող թուրքերի վիրավորանքները, հեռացան այնտեղից և բնակվում են լեռան վրա: Այսօր այնտեղ կան սոսկ երկու տուն թուրքեր, որոնք խնամում են լուվալ քաղաքում բնակվող իրենց տեղերի անասունները:

Գուռն Լուծանի գյուղը գտնվում է նույն Օսմ գետի ափին: Բնակիչները եկեղեցի չունեն, թեև դրա կառուցման վայրը որոշված է, բայց կաշառքի կարիք է զգացվում, որպեսզի սուլթանից կառուցման համար թույլտվություն ստացվի: Գյուղում ապրում են 226 հոգի «հաղորդություն ստացող»¹² նույն կաթոլիկ պավլիկյաններից: Նրանց հարևանությամբ կա թուրքի 25 տուն և նրանց փայտաշեն մզկիթ:

Հեղինակը մի նախադասություն է նվիրել նույն Օսմ գետի ափին գտնվող Բառնոսավո (Barnosauo) գյուղին, ցույց տալով, որ այնտեղ ապրում են «հաղորդություն ստացող» 74 կաթոլիկ և 23 երեխա, որից հետո կանգ է առնում Պետիկլադենցի (Petikladensi) կոչվող գյուղի վրա: Այն գտնվում է լայնատարած դաշտում և պետական ճանապարհի մոտ, «որի պատճառով բնակչությունը տառապում է անցող թուրքերից, որոնք կերակրվում են նրանց հաշվին»: Քարաշեն եկեղեցին կառուցված է 1609 թ., մոնսինյոր Պետրոս Սալինատի կողմից, որը սույն «Realazione»-ի գրության ժամանակ Սոֆիայի արքեպիսկոպոսն էր, իսկ այն ժամանակ Սոֆիայի եպիսկոպոս: Եկեղեցին նվիրված է Պետրոս և Պողոս առաքյալներին, ունի երկու բեմ, Պողոս V պապի կողմից նվիրաբերված սպասք: Գյուղում բնակվում են «հաղորդություն ստացող» 750 կաթոլիկ պավլիկյաններ՝ իրենց ծխական քահանայով և երկու տուն թուրքեր:

Նույն Օսմ գետի ափին է գտնվում Տրնիչևիցա (Tarniciuza) գյուղը՝ Քրիստոսի համբարձման եկեղեցիով: Բնակիչները «հաղորդություն ստացող» 170 հոգի են և 30 երեխա: Հիշյալ գետի ափին է գտնվում Բրեստովեց (Brestouez) գյուղը՝ առանց եկեղեցու, 134 հոգի կաթոլիկ բնակչությամբ և 36 երեխաներով: Պատարագ մատուցելու համար եկեղեցական անհրաժեշտ սպասքը և հանդերձները տանում են մասնավոր տուն: Թուրքերի տները 30-ն են և ունեն մզկիթ: Թուրքերը շատ ունևոր են և քրիստոնյաներին նեղում են:

¹² Բնագրում՝ «di Comunione», որ Յո. Սպիտարևական թարգմանում է «κατομνισα за при-чашение»: Բոլոր դեպքերում խոսքը մեծահասակներին է վերաբերում, քանի որ երեխաները հիշվում են առանձին:

Անանունը մանրամասն խոսում է Դանուբի ափին գտնվող Նիկոպոլիս քաղաքի մասին:

Նիկոպոլիսի դիրքնեղում կա 14 ծխական եկեղեցի՝ ապահովված մեծ մասամբ Հռոմի և Լորենտյի կոլեջներում կրթություն ստացած տեղացի բուլղար քահանաներով, սլարդ է՝ կաթուղի:

«Պալիկյանների ժողովրդից» կա Հռոմի կոլեջներում կրթություն ստացած յոթ քահանա, որոնք գերազանց տիրապետում են իտալերենին, լատիներենին, բուլղարերենին, ապա նաև թուրքերենին և վալախերենին: Պալիկյանների գյուղերը 14-ն են, որոնցից երկուսը դեռևս կաթոլիկություն չեն ընդունել: Անանունը հույս է հայտնում, որ նրանք ևս պիտի ենթարկվեն հռոմեակաթոլիկական եկեղեցուն: Այդ ուղղությամբ մեծ ջանքեր են գործադրում նրանց հոգևոր հովիվը՝ եպիսկոպոսը և ծխական քահանաները:

Նիկոպոլիսից 10 մղոն հեռավորության վրա, Դանուբ գետի ափին, գտնվում է ամբողջությամբ պալիկյաններով բնակեցված Բեյլիանի (Biegliani) գյուղը: Ունի փայտաշեն եկեղեցի՝ նվիրված Աստվածածնի նշման: Բնակչությունը՝ 760 հոգի՝ «հաղորդություն ստացող» կաթոլիկ պալիկյաններ են և 162 երեխա: Տասը տուն թուրքեր են, որոնք, սակայն, բնակվում են Նիկոպոլսում, իսկ Բեյլիանի գյուղի իրենց տները օգտագործում են անասուններին հոգալու և երկրագործական աշխատանքներ կատարելու ժամանակ:

Դանուբ գետի ափին է գտնվում Խորեշի (Horescie) գյուղը: Այնտեղի պալիկյանները չորս հարյուր հոգի են՝ «հաղորդություն ստացող» և 80 երեխա: Ունեն սբ. Գեորգիի նվիրված փայտաշեն եկեղեցի: Շուրջ քսան տուն թուրք կա՝ ենիչերիներ, որոնք, նկատի ունենալով շրջանի բարեբերությունը, Անանունի երկը գրվելուց քսան տարի առաջ, եկան ու հաստատվեցին: Դրանից առաջ ընդամենը թուրքի մեկ տուն է եղել: Այս գյուղի պալիկյան բնակչությունը 1618 թ. «մեր սուրբ հավատքից», այսինքն, կաթոլիկությունից հրաժարվեց՝ շնորհիվ Տոնովոյի տիրոջ փողերի, բայց մոնսինյոր Պետրոսի [Սալինատի], այն ժամանակվա Սոֆիայի [կաթոլիկների] եպիսկոպոսի, իսկ այժմ Սարդիկայի արքեպիսկոպոսի ջանքերով նրանք դարձյալ ենթարկվեցին Հռոմի պապին: Մոնսինյոր Պետրոսը այս գործի վրա ծախսեց 200 տալեր:

Բախչեո (Bahzeuo) գյուղում ապրում են 800, իսկ Կալուգերիցա (Kalu-geriza) գյուղում 200 հոգի՝ «պալիկյան ազգից»: Այս գյուղերի բնակչությունը, գրում է Անանունը, մինչև օրս շրջափակում են «ճշմարիտ լույսը» (այսինքն՝ կաթոլիկություն), քանի որ «հաստագլուխ են և գոռող»: Հեղինակը հույս է հայտնում, որ Աստծո օգնությամբ կընդունեն այն:

Սոֆիայի դիրքնեղում ապրում են 8.000 «հաղորդություն ստացող» (իմաս՝ կաթոլիկ), որոնցից 6.000-ը՝ հենց դիրքեզի սահմաններում, 2.000-ը՝ նրանից դուրս, բայց նրան ենթակա: Ապրում են խառը՝ թուրքերի, ուղղափառների և հրեաների հետ: Երեխաները 1363-ն են:

Հիշյալ թագավորության մեջ (իմաս՝ երկրում) կան սբ. Ֆրանցիսկոսի միաբանության շուրջ 60 կրտսեր եղբայրներ: Նրանցից ոմանք կրթություն են րստացել Իտալիայում և ուսումնառության ավարտից հետո վերադարձել իրենց հայրենիքը:

Խոսելով Օխրիդա քաղաքի մասին, Անանունը նշում է նրա կաթոլիկ բնակիչների թվաքանակը՝ 15.535 հոգի, որոնք բնակվում են թուրքերի և ուղղափառ բուլղարների հետ միասին:

Շումանը (Sciuman) ¹⁸ համարվում է շատ մեծ գյուղ. Մարկիանուպոլսից

¹⁸ Պարզ չէ, այս Շումանը (Sciuman), որ գյուղ է համարվում, նույնանուն է արդյոք Շուման քաղաքի հետ, որն Անանունը հիշեց վերևում և բերեց Suman գրությամբ: Յո. Սպիտարեսկան երկու տեղանուններն իր բուլղարերեն թարգմանության մեջ բերում է Шуман ձևով: Sciuman-ը ունի 4.000 տուն թուրք և 27 հոգի կաթոլիկ՝ գուրոմնիկցիներ և բուլղարներ, այն գեպքում, երբ Suman-ը, Անանունի տվյալներով, ունի 1.000 տուն թուրք ու բուլղար բնակչություն և 7 տղեկ կաթոլիկ:

15 մղոն հեռավորության վրա, որտեղ կան 1000 տուն թուրք և ուղղափառ բուլղար և 7 տուն կաթոլիկներ:

Անանուն իր նկարագրությունն ավարտում է՝ անդրադառնալով Ռազգրադ (Rasguard) «մեծագույն գյուղին», որտեղ բնակվում են 8.000 ուղղափառ բուլղար և թուրքեր: Հնդամենը մեկ տուն կաթոլիկ կա:

Ահա համառոտ գծերով «Relazione del Regno di Bulgaria» երկում հայերի և պավլիկյանների մասին առկա տեղեկությունները:

Հայերը հիշվում են ամբողջ երկրի բուլղար, հույն, հրեա բնակիչների թրվում, որոշակիորեն՝ Սոֆիայում, Ռուսչիչում, Խարազգրադում և Պրեսլավում: Նրանց հիմնական զբաղմունքը վաճառականությունն ու արհեստագործությունն էր: Հետաքրքրական է Անանունի նկատողությունը Սոֆիայի հայության մասին: Նրանց թիվը փոքր չէ՝ 200 տուն: Եթե անգամ յուրաքանչյուր ընտանիքը բաղկացած լիներ հինգ անդամից (իրականում կարող էր և շատ ավելի մեծ լինել), ապա XVII դ. կեսերին Սոֆիայում հազարից ավելի հայություն կար: Միակ հարցը, որ կանգնում է մեր առաջ, հետևյալն է. այս հայերը ե՞րբ և ո՞րտեղից են՝ եկել հաստատվել Բուլղարիայում: Հիշում ես դեռ վաղ միջնադարում տեղի ունեցած հայության գաղթը Թրակիա: Ղեկնող պատմիչը հիշում է Կարին քաղաքի հայության խնդրանքը բյուզանդական կայսր Կոստանդին V-ին (741—775 թթ.)՝ իրենց տեղափոխելու Բյուզանդիայի տարածքը՝ ազատվելու համար արաբների բռնություններից: «Նորա տունեալ հրաման, վաղվադակի հանդերձեալ զաղխս իւրեանց՝ խաղացին յառաջ, ապաւինեալք ի զօրութիւն տէրունեան խաչին և ի փառս արքային. թողին զերկիր ծննդեան իւրեանց, և հաստաժեալք անկան ի կողմն արքային բարեպաշտի»¹⁴:

Հիշյալ դեպքի մասին ավելի պարզ ու հստակ են բյուզանդական աղբյուրների տեղեկությունները: Նրանք որոշում են և գաղթականների հաստատման որոշակի վայրը: Այսպես, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեփորի (806—815 թթ.) «Համառոտ պատմության» համաձայն Կոստանդին V կայսրը սևկեսց կառուցել Թրակիայի քաղաքները, որտեղ բնակեցնում է մելիտենացիաց քաղաքից և Թեոդոսուպոլսից (Կարին) գաղթեցրած ասորիներին և հայերին, սիրալիր կերպով նվիրելով նրանց կարիքներին անհրաժեշտ ամեն ինչ»¹⁵: Այս դեպքի առթիվ Թեոփանես Խոստովանողը (752—818 թթ.) գրում է. 752 թ. Կոստանդին կայսրը «Թեոդոսուպոլսն ու Մելիտենեն առավ և հայերին գերի վերցրեց»¹⁶: Չորս տարի անց «Կոստանդին կայսրը Թեոդոսուպոլսից ու Մելիտենից գաղթեցրած ասորիներին ու հայերին Թրակիայում վերաբնակեցրեց: Սրանցից այստեղ պավլիկյանների աղանդը տարածվեց...»¹⁷:

Սխալ կլիներ ենթադրել, որ վերոհիշյալ բոլոր հայերը դավանել են պավլիկյանների գաղափարախոսությունը: Նրանց հիմնական զանգվածը, բնական է, հայ քրիստոնյաներ էին: Ուստի, Թրակիա գաղթեցված հայերի մի մասը հայադավան էր, մյուսը՝ աղանդավոր: Աղանդավոր հայերի հոծ բազմություններ Թրակիա բռնադադթեցվեցին վերոհիշյալ դեպքերից մեկ հարյուրամյակ անց՝ Հովհաննես Չմշկիկ կայսեր կողմից (969—976 թթ.): Կին պատմիչ Աննա Կոմնենեի ասելով, «այս հրաշալի կայսր Հովհաննես Չմշկիկը [մանիքեցիներին] պատերազմում պարտության մատնելով, Ասիայից՝ Խալյուքներից (Խաղտիք) ու Արմենիականների վայրերից գաղթեցրեց և ստիպեց Ֆիլիպուպոլսի շուրջը բռնակվեն... Համայն Ֆիլիպուպոլսի բնակչությունը, փոքր բացառությամբ, մանիքեցիներ էին... Նրանց թիվը գնալով աճում էր, և Ֆիլիպուպոլսի շուրջը բռնակվողները բոլորն էլ հերետիկոսներ էին»¹⁸: Աննան «մանիքեցիներ» ասելով, հարկավ, նկատի ունի նրանց գաղափարները ժառանգած պավլիկյանների հետ-

14 Պատմութիւն Ղեոնեայ մեծի վաղապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 129:

15 Հայ ժողովրդի պատմության Բրեստոմատիա, հ. Ա, Ե., 1931, էջ 740:

16 Նույն տեղում, էջ 738:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, էջ 807:

նորդներ թոնդրակեցիներին, քանի որ պապիկյաններն էլ, համենայն դեպս Հայաստանում և Փոքր Ասիայում դեռ IX դ. երրորդ քառորդում վերացել էին: VIII և X դդ. Թրակիայում հաստատված հայերը, սակայն, չեն կարող XVII դ. հայերի նախնիները լինել: 1000 տարվա ընթացքում նրանք պիտի ձուլված լինեին տեղական բնակչության մեջ: Մնում է ենթադրել, որ XVII դ. Բուլղարիայում ապրող հայերը ավելի ուշ շրջանի արտագաղթի արդյունք են և ոչ անպայման Հայաստանից, այլ իրենց նորաստեղծ բնակատեղիներից:

Այլ է պապիկյան աղանդավորների խնդիրը: Նրանց «ձուլումը» ամենից շատ պիտի արտահայտված լիներ մայրենի լեզվի կորստով և աղանդավորական գաղափարների որոշ մասի աղավաղմամբ ու վերացմամբ և նորերի ընդունմամբ: Նրանց մարդաբանական «ձուլում» տեղի չունեցավ, և պատճառների մասին դեռ առանձին կիսովի: Նշենք միայն, որ XVII դ. պապիկյաններին ոչ մի աղբյուր հայ չի համարում, անդամ իրենք՝ այդ պապիկյանները, չդիտեն, որ ծագումով հայ են: Դա վառ վկայությունն է այն բանի, որ «Relazione»-ի հայերի (Armeni) և պապիկյանների (Paolinisti) միջև ուղղակի կապ գոյություն չունի, թեև մարդաբանական տվյալները միանգամայն հաստատում են նրանց հայկական ծագումը: Ուսումնասիրողների հետազոտությունների համաձայն, Բուլղարիայի «պապիկյանների մարդաբանական տիպարը միանգամայն տարբերվում է բուլղարականից և հունականից: Նրանք կարճահասակ են, նեղճակալ, խոշոր քրեռով և գրեթե բոլորը թխադեմ են ու «նաներ»¹⁰: Կասկած կա, որ մեր առաջ գիտության մեջ արմենոիդ կոչվող տիպարն է:

Հետաքրքրականը «Relazione»-ի վկայությունն է այն մասին, որ Սոֆիայի հազարից ավելի հայերը իրար հետ հաշտ ու խաղաղ չէին ապրում, որ նրանք երկու մասի էին բաժանված, ընդ որում մեկը մյուսին հերետիկոս էր համարում: Այս փաստն էլ բացատրության, մեկնաբանության կարիք ունի: Կասկած չի կարող լինել, որ խոսքը հավատո խոստովանության հարցերին է վերաբերում: Եթե «Relazione»-ի կաթոլիկ հեղինակը նրանց թեև չի մեկնում, և մեկը կաթոլիկ չի համարում, մնում է ենթադրել, որ այդ հայերի մի մասը հայադավան էր, մյուսը՝ տեղի բուլղար և հույն քաղկեդոնիկ բնակչության ազդեցությանը քաղկեդոնիկություն ընդունած: Դեռևս վաղ միջնադարից հայ և բյուզանդացի հեղինակները միմյանց հերետիկոս էին համարում ու անվանում:

Մեծաթեք են «Relazione»-ի տեղեկությունները Բուլղարիայի պապիկյան բնակչության մասին: Ինչպես տեսանք, նրանք բազմաթիվ են, բնակվում են առանձին համայնքներով Ֆիլիպուպոլիսից ու Սոֆիայից հյուսիս ընկած ողջ տարածքում: Թեև համարվում են առանձին ժողովուրդ, ազգ, տեղում առկա քրիստոնեական ոչ մի դավանանքի (ուղղափառ, կաթոլիկ և այլն) չպատկանող աղանդավորներ (խոսքը կաթոլիկություն ընդունածներին չի վերաբերում), ոչ մեկի կողմից հետապնդման ու հալածանքների չեն ենթարկվում, ինչպես իրենց սարսափազդու նախնիները՝ Հայաստանում և Փոքր Ասիայում, հետագայում նաև Թրակիայում XI—XII դդ.: Նրանց բնակության վայրերը հիմնականում հետևյալներն են. Ֆիլիպուպոլիս քաղաքը (որտեղ նրանք իրականում VIII և X դդ. բռնագաղթել էին Հայաստանից բյուզանդական իշխանությունների կողմից), բուլղարական երկրորդ թագավորության մայրաքաղաք Տոնովոյի մոտիկ գտնվող Մառնոպոլցի (իսկ այժմ՝ Պապիկենի կոչվող գյուղը), որի 860 հոգուց բաղկացած պապիկյան համայնքը, ինչպես տեսանք, կաթոլիկություն ընդունեց, ապա Դանուբ դետի աջ ափի երկայնքով մի շարք քաղաքներ և գյուղեր, գլխավորապես Նիկոպոլիսը, որտեղ նրանք ավելի վաղ տեղափոխվել էին հա-

¹⁰ К. М. 'Αποστολίδου. Η Φιλιπούπολις επί Τουρκοκρατίας κατά τον 17ον αιώνα. Προσγλωττισμός των Παυλικιανών εις τον καθολικισμόν 'Αρχείο του Θρακικού Λαογραφείου κα' Γλωσσικού Θησαυρού. 11 (1944—45), σ. 155 (Կ. Մ. Աղաստալիդիս, Ֆիլիպուպոլիսը թուրքական տիրապետության շրջանում՝ XVII դարում: Պապիկյանների դարձը կաթոլիկություն: Թրակական ազգաբնակչության լեզվաբանական գանձարանի արխիվ, հ. 11 (1944—45), էջ 155):

րավային Բուղարիայից: Տեղափոխվելով մի բնակավայրից մյուսը, նրանք վերջինիս տալիս էին իրենց նախկին բնակավայրի անունը, ավելացնելով «պավլիկյան» բառը: Այսպես, օրինակ, Նիկոպոլսի սանջակում 1479—1480 թթ. հիշվում է 12 բնակատեղի, այն է. Павликянско Парносово, Павликянска Скравенища, Павликянско Тележани, Павликянско Загабарно, Павликянско Одърне, Павликянско Лъжжәне, Павликянско Орешане, Павликянска Калугерина, Павликянска Трънчовина, Павликянска Ърестовина, Павликянско Белене և Павликян²⁰:

Հավաստի խոստովանության տեսակետից Բուղարիայի պավլիկյանները XVII դարում արդեն VII—XI դդ. պավլիկյանները չէին, թեև նախկին պաշտամունքի առանձին վերապրուկներ հանդիպում են: Իսկական պավլիկյանները եկեղեցի չունեին, նրա գոյությունը չէին ընդունում, եկեղեցի էին անվանում իրենց ժողովարանները: Ըստ Անանունի, Բուղարիայի պավլիկյանները եկեղեցիներ ունեն: Իսկական պավլիկյանները քահանաներ և ավելի բարձր հոգևորականություն չունեին, իրենց հոգևոր կարիքները հոգում էին սինեկղեմոս և նոտար կոչվածները: Բուղարիայում նրանք քահանաներ ունեին, բայց, այդուհանդերձ, հին պավլիկյաններից որոշ բան ժառանգել էին. նախ և առաջ սերը դեպի Պողոս առաքյալը, որի անունով էլ կոչվեցին պավլիկյաններ, իրենց համայնքները Հայաստանում կոչեցին Պողոս առաքյալի հիմնադրած քրիստոնեական համայնքների անունով, աղանդապետները որպես երկրորդ անուն ստացան Պողոս առաքյալի աշակերտներից մեկնումեկի անունը²¹, Հնօրյա պավլիկյանները մերժում էին Հին կտակարանի բոլոր գրքերը, ընդունում էին միայն չորս Ավետարանները, Պողոս առաքյալի տասնչորս թղթերը, Հակոբի կաթողիկե թուղթը, Հովհաննեսի երեք թղթերը, Հուդայի կաթողիկե թուղթը, Գործք առաքելոցը²², Անանունի համաձայն, Բուղարիայի պավլիկյանները XVII դ. սուրբ դրբերից ընդունում էին միայն ավետարանները, Պողոս առաքյալի թղթերը, Գործք առաքելոցը և Հովհաննու Հայտնությունը: Հին պավլիկյանները ատելությամբ էին լցված Պետրոս առաքյալի հանդեպ, XVII դ. նրանք (արդեն կաթողիկ դարձած) ունեին Պողոս-Պետրոս առաքյալների անվամբ եկեղեցի, ինչպես և Աստվածածինն նվիրված, որին հին պավլիկյանները չէին ընդունում: Հնօրյա սավլիկյանները չէին ընդունում սրբերին և սրբապատկերները, խաչի նշանը, XVII դարի պավլիկյանները ունեին Աստվածածնի նշանակալի, համարում էին խաչը, թեև սրբապատկերները չէին ընդունում:

Հին պավլիկյանները չէին ընդունում եկեղեցու խորհուրդները, այդ թվում և հաղորդության խորհուրդը: Անանունի պավլիկյանները հաղորդություն ընդունում էին: Նրանք, երբ ժամանակին դիտեին, որ ազգություն հայ են, ուղղափառ հայերից ընդունել էին զուտ հայերին վերաբերող և բյուզանդական եկեղեցու կողմից շարունակ քննադատված Առաջավորաց պահքը²³:

Ավելորդ չէ անդրադառնալ նաև Անանունի՝ 17-րդ դարի պավլիկյանների ծագմանը տված բացատրությունը: Ինչպես նախապես ասվեց, բոլորը նրանց հայկական ծագումը չգիտեին: Աղբյուրի նշած առաջին վարկածի համաձայն, նրանց հավատքը, այսինքն՝ գաղափարախոսությունը «Հոռմից է եկել»: Փաստ է, որ պավլիկյան գաղափարախոսությունը բոգոմիրների միջոցով տարածվեց Իտալիայում և հարավային Ֆրանսիայում, այժմ այդ գաղափարներին՝ Բուղարիայում հանդես գալը բացատրում են նվրոպյան XVI դարում ո-

²⁰ Извори за българската история, т. XIII, София, 1966, с. 167, 219, 227, 237, 283, 311, 313, 323, 334. նաև Милчо Йовков, Павликени и павликянството в България Павликени и Павликянския край, София, 1977, с. 89, 95, E. Fermendzin, Acta Bulgariae Ecclesiastica, p. 6—7.

²¹ Հայ ժողովրդի պատմության Քրեստոմատիա, հ. Ա, էջ 752:

²² Նույն տեղում, էջ 749:

²³ Բյուզանդացիները այն աղավաղված ձևով Արցիմուրիոն էին անվանում:

դողած ռեֆորմացիայի գաղափարների ազդեցությամբ, այսինքն՝ շարժումը գիտվում է հակառակ ուղղությամբ:

Ինչ վերաբերում է մյուս վարկածին, թե նրանց աղանդը սկիզբ է առնում Պողոս Սամոսատցուց (III դ.), այդ մասին գրում էին հարցին անդրադարձած բյուզանդական բոլոր հեղինակները: Ծշմարտությունը, սակայն, այն է, որ խոսքը իրականում վերաբերում է ոչ Պողոս Սամոսատցուն, դատապարտված Անտիոքի 264, 266 և 269 թթ. եկեղեցական ժողովներում, այլև Նիկիայի 325 թ. առաջին տիեզերական ժողովում: Բյուզանդական ավելի ուշ շրջանի հեղինակները պալիկյանիտների՝ Պողոս Սամոսատցու աղանդի հետևորդներին սխալմամբ նույնացնում էին արդեն VII դարում հանդես եկած պալիկյանների հետ (Սիմեոն Մետաֆրաստ, X դ., Արիստենոս, Զոնարաս, Վալսամոն, XII դ. և ուրիշներ), որոնց անունը իրականում կապված է Պողոս առաքյալի անվան հետ²⁴:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչու պալիկյանները XVII դ. զանգվածաբար ընդունեցին կաթոլիկություն, Հավանաբար այն պատճառով, որ տեղացի բուլղար և հույն բնակչության շրջապատում արհամարհված էին (դա պարզ կլինի վերջում բերված փաստերից) և այդ ձևով ուղում էին սոցիալական աստիճանակարգում բարձր երևալու Հենց այդ՝ հույներից և բուլղարներից արհամարհված լինելու հանգամանքն էր հիմնականում նրանց չձուլվելու, իրենց հարազատ մարդաբանական տիպարը սահմանելու պատճառը: Խառն մոտենությունները հույների և բուլղարների հետ բացառված էին, նրանք ներփակված էին իրենց կեղևի մեջ: Առանձին դեր խաղացած պիտի լինի նրանց զավակների՝ Խալիայում ձրի ուսում ստանալու հանգամանքը, ոչ պակաս չափով և՛ Propaganda Fide -ի հոգեորսության համար գործի դրված կաշառատվությունը: Անանունը պարզ վկայում է, որ Խորեշի գյուղի պալիկյանները, որոնք 1618 թ. հրաժարվել էին կաթոլիկությունից, վերադարձան դրան Սոֆիայի կաթոլիկ եպիսկոպոս մոնսինյոր Պետրոս Սալինատիի ջանքերով և ոչ առանց նյութական զոհողության:

Պալիկյանները Բյուզանդական կայսրության սահմաններում (լինի Բյուզանդական Հայաստանում, լինի Փոքր Ասիայում և Թրակիայում) մշտական հալածանքների էին ենթարկվում, նրանց աղանդապետները՝ մահապատժի՝ քարկոծությամբ և ողջակիզմամբ: Թրակիայի պալիկյանները (իսկական աղանդավորները) հալածանքների էին ենթարկվում անգամ XII—XIII դդ.: Դա էլ ունի իր բացատրությունը: Նրանք այն ժամանակ իշխանությունների համար վտանգ էին ներկայացնում և՛ իրենց գաղափարախոսությամբ, և՛ պայքարով: Զե՞ որ Բուլղարիայում պալիկյան գաղափարների ազդեցության տակ բռնկվեց բողոքիների հուժկու շարժումը, այդ գաղափարները տարածվեցին Խալիայում և Հարավային Ֆրանսիայում:

Ֆիլիպուպոլսի պալիկյանները հիշվում են Երրորդ (1188—1192 թթ.) և Զորրորդ (1203—1204 թթ.) խաչակրությունների պատմիչներ Առնոլդ Լուբեկցու և Ժոֆրուա Վիլհարդուինի կողմից: Վերջինս նրանց անվանում է Popelicanii²⁵: Ժամանակի ընթացքում, հատկապես Թրակիայում և Բուլղարիայում բյուզանդական տիրապետության վերացումից հետո (1186 թ.), բյուզանդական մոլեռանդ և անհաշտ հոգեորականությունը նախկին կարողությունը չուներ: XVI—XVII դդ. պալիկյանները նախկինները չէին, նրանք ալևս որևէ վրտանդ չէին ներկայացնում իշխանությունների համար, հանգիստ ապրում էին իրենց գյուղերում, զբաղվում արհեստներով ու վաճառականությամբ, գյուղատնտեսությամբ: Համենայն դեպս XVI—XVII և հետագա դարերի աղբյուրները, թեև բազմիցս են հիշում Բուլղարիայի պալիկյաններին, չեն հանդիպում

²⁴ Р. М. Бартияня, Источники для изучения истории павликянского движения, Ереван, 1961, с. 28—31.

²⁵ Arnold of Lübeck, Chronica Slavorum. Monumenta Germaniae Historica. Scriptores, Hannover—Berlin, 1868. Geoffroi de Villeharduin. La Conquete de Constantinople. Texte et traduction nouvelle par E. Bouchet, Paris, 1891, p. 283.

ներանց հալածանքների ենթարկելու մասին որևէ տեղեկության, Այդ աղբյուրներից շատերը ճանապարհորդների, եվրոպական պետությունների Կոստանդնուպոլիս ուղևորվող և Ֆիլիպուպոլսի վրայով անցնող ղեսպանությունների անդամների նոթերն են, 1616 թ. Ֆիլիպուպոլսում է եղել Adam Wennern-ը, նա համառոտ կերպով ներկայացնում է քաղաքի պատմությունը, քաղաքում իր եղած ժամանակ այն բնակեցված էր հույներով, բուլղարներով, պավլիկյաններով, թուրքերով և հրեաներով, որոնք գլխավորապես մանր առևտրով էին զբաղվում:

1664 թ. Ֆիլիպուպոլսով է անցել անգլիացի John Burbury-ն՝ Լոնդոն-վիհենա-Կոստանդնուպոլիս գնացող ղեսպանության կազմում: Նա 1671 թ. հրապարակել է մի գիրք՝ նվիրված հիշյալ ճանապարհորդության, որտեղ հիշատակվում են գյուղերում ցրված Ֆիլիպուպոլսի պավլիկյանները²⁶,

Մեկ տարի անց, 1665 թ. Կոստանդնուպոլիս ուղևորվող Հունգարիայի թագավոր Լեոպոլդ Ա-ի (1655—1705 թթ.) և Ավստրիայի կայսեր (1657—1705 թթ.) ղեսպանությանը մասնակցած Paul Taffernern-ը նույնպես հիշատակում է Ֆիլիպուպոլսի պավլիկյաններին:

Իտալացի Conte de Marsigli-ն 1679—1700 թթ. ընթացքում բազմիցս է եղել Ֆիլիպուպոլսում: Նա, թեև քաղաքը թուրքական է համարում, նշում է, որ նրա կենտրոնում, բլուրների վրա, բնակվում են հույներ և պավլիկյաններ²⁷: Պավլիկյաններին հիշատակում է նաև ճանապարհորդ և քաղաքական գործիչ Ռիկոն, որ Ֆիլիպուպոլսում է եղել 1665 թ.²⁸,

1717 թվակիր իր մի նամակում Lady Wortly Montagu-ն գրում է. «Ֆիլիպուպոլսում ես հանդիպեցի քրիստոնյա աղանդավորների, որոնք իրենց պավլիկոս են անվանում: Նրանք ցույց տվեցին մի հին եկեղեցի, որտեղ, իրենց ասելով, քարոզել է սուրբ Պողոսը, որ իրենց ամենասիրելի սուրբն է»²⁹:

XIX դ. սկզբին Բուլղարիայի պավլիկյաններն արդեն ամբողջությամբ կաթոլիկ էին դարձել և ազգությամբ իրենց բուլղար էին համարում, թեև շարունակում էին իրենց պապենական՝ պավլիկյան հորջորջումը կրել: Նրանց մասին, հատկապես նրանց դարավոր ու մշտական բնակատեղիի՝ Ֆիլիպուպոլսի (Պոլսի) պավլիկյանների մասին տեղեկությունների հանդիպում ենք 1857 թ. հիշյալ քաղաքում Ռուսական կայսրության հյուպատոս նշանակված, ազգությամբ բուլղար, Նայդեն Գերովի Սանկտ Պետերբուրգ ուղարկած գաղտնի զեկուցագրերում: Ասենք այստեղ, որ նույն այդ թվականին Ֆիլիպուպոլսում բացվեցին նաև Ֆրանսիայի և Ավստրիայի հյուպատոսարանները: 1857 թ. հուլիսի 31-ի թվակիր նամակում Ն. Գերովը Ն. Դ. Ստուպինին ի միջի այլոց գրում է. «Ուղղափառ (պրավոսլավ) քրիստոնյաները իրենց հյուպատոսն են համարում ինձ, ի հակադրություն պավլիկյանների, որոնք իրենցն են համարում Ֆրանսիացի և ավստրիացի փոխհյուպատոսներին: Սրանցից առաջինները պավլիկյաններին համարում են իրենց հովանավորյալները («protèges»)», Ն. Գերովը շարունակության մեջ գրում է. «Պարտքս եմ համարում ավելացնել, որ Ֆրանսիայի փոխհյուպատոսը հյուպատոսարանի շենքում դրոշ բարձրացրեց հուլիսի 28-ին, կիրակի օր, և առավել հանդիսավորության համար արարողությունը մասնակցելու հրավիրեց պավլիկյան բոլոր գյուղերի քահանաներին և ավադներին»³⁰:

²⁶ A Relation of a Journey of the right honorable M. Lord Howarth from London to Vienna and to Constantinople. London. 1671.

²⁷ Stato militare dell' Imperio Ottomano, Amsterdam, 1732.

²⁸ Riccaut, Histoire de l'etat present de l'Empire Ottoman.

²⁹ К. М. А п о с т о л і д о с . II Филіппополіс єпі толікарстві. Сел. 145—146. (Կ. Մ. Ապոստոլիդիս, Ֆիլիպուպոլիսը թուրքական տիրապետության շրջանում, էջ 145—146: Գրքի ամբողջական վերնագիրը տե՛ս վերը, ծանոթ. 19):

³⁰ Документи за бългурска история, Архив на Пандей Геров, т. I. София, 1931, с. 9—10: 18-րդ դարի պավլիկյանների մասին տե՛ս Милчо Йовков, Павликени и павликянството в България, с. 106—107.

Ռուսական դրոշը ռուսական հյուպատոսարանի շենքում պարզվեց նույն 1857 թ. սեպտեմբերի 1-ին: Այդ մասին Ն. Գերովը գրում է Ն. Դ. Ստուպինին իր սեպտեմբերի 5-ի նամակում: Հյուպատոսը հայտնում է, որ հանդիսություններին մասնակցում էին քաղաքի թուրքական զորքերը, մեկ փաշա, ավագներ, հայերն իրենց հռչակաբաններով, և, վերջապես, հրեաների ավագանին: Դրոշի բարձրացման պահին հայ քահանաները հանդեսին պատշաճող աղոթք կարդացին: Նրանք Ն. Գերովին ասացին, որ «իրավունք ունեն աղոթելու թագավոր-կայսեր համար, իրենց հայրենիքի [Հայաստանի] օրինական տիրոջ և հարազատ ժողովրդի բարեբարի...»: Ն. Գերովը այս նամակում մի անգամ ևս հայտնում է, որ ուղղափառներն ու հայերը «իրենցն են համարում ռուս հյուպատոսին, ի հակադրություն պալիկյանների, որոնք իրենցն են համարում ֆրանսիական և ավստրիական հյուպատոսներին»⁸¹:

1858 թ. մարտի 19-ի նամակում Ն. Գերովը գրում է Ն. Դ. Ստուպինին, թե Ֆիլիպոպոլսի «պալիկյան կաթոլիկական եկեղեցում» զանգ կախվեց, որն ամեն օր ղողանջում է, ընդ որում, թուրքական իշխանությունները ոչ մի դիմադրություն չեն ցուցաբերում, «կարծես չեն էլ նկատում զա»: Հյուպատոսը ավելացնում է, որ «պալիկյանները, փոքրթիվ և արևմտաեվրոպացիներին դավանակից լինելով, թուրքերի կողմից դիտվում են որպես օտարերկրացի և այդ պատճառով նրանց նկատմամբ ավելի զիջող են, քան ուղղափառներին»⁸²:

1858 թ. ապրիլի 30 թվակիր նամակում Ն. Դ. Ստուպինին ռուս հյուպատոսը տեղեկացնում է, որ թուրքերը խաթթը-հումայունով խոստացված իրավունքները սահմանափակում են այն տեսակետից, որ 1) եկեղեցի կարելի է կառուցել միայն այն վայրերում, որտեղ նախկինում այդպիսիք եղել են և 2) եկեղեցիների կառուցումը չպետք է թուրքերին անախորժություններ պատճառի: Բայց հակառակ դրան, պալիկյաններին թույլատրվում է կաթոլիկական եկեղեցիներ կառուցել այն վայրերում, որտեղ այդպիսիք նախկինում ամենևին չեն եղել⁸³: Այդ եկեղեցիների կառուցումը, հյուպատոսի ասելով, կնքպաստի ունիայի ուղղությամբ տարվող աշխատանքներին: Նշենք այստեղ, որ հյուպատոսի նամակներում, երբ խոսքը վերաբերում է կաթոլիկությանը հարած ազգությամբ բուլղարներին, վերջիններս ունիատներ (ունիթոուներ) են կոչվում, բայց կաթոլիկ պալիկյանները երբեք ունիատ չեն կոչվում, այլ կա՛մ պալիկյաններ, կա՛մ կաթոլիկ բուլղարներ:

1859 թ. հոկտեմբերի 24-ին իշխան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն՝ Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանորդին գրած նամակում Ն. Գերովը արևմտաեվրոպական պետությունների՝ Թուրքիայի ամբողջ տարածքում ծավալած կաթոլիկական պրոպագանդի առնչությամբ իր անհանգստությունն է հայտնում. «Կաթոլիկական պրոպագանդը,— գրում է նա,— օրավուր ուժեղանում է Թուրքիայում, օտարերկրացիները շարունակ ջանում են ջնջել այստեղի քրիստոնյաների համակրանքը դեպի Ռուսաստանը: Ֆիլիպոպոլսի կաթոլիկ եպիսկոպոս Անդրեյ Կազանովան Ավստրիայի վրայով գնաց Հռոմ, ներկայացավ հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան անձանց, և օժանդակություն, միջոցներ խնդրեց համայն Ռուսարիայի համար, Ֆիլիպոպոլսում կաթոլիկական պրոպագանդայի կենտրոն հիմնելու համար: Սկոպիեի և Բիտոլի անգլիական հյուպատոսները այս ամառ շրջեցին հյուսիսային Մակեդոնիայով և արևմտյան Բուլղարիայով մեկ և բացահայտ կերպով բուլղարներին հասկացնել էին տալիս՝ քանի դեռ չեն դադարել ռուսներին համակրելուց, նրանց հետ հույսեր կապելուց, ոչ մի օժանդակություն չեն ստանալու»⁸⁴:

81 Документ 3а българска история, т. I, с. 17—18.

82 Նույն տեղում, էջ 55:

83 Նույն տեղում, էջ 58:

84 Նույն տեղում, էջ 100:

Ն. Գերովը Սանկտ Պետերբուրգ, Սլավոնական բարեգործական կոմիտեի⁸⁵ քարտուղարին հղած 1869 թ. դեկտեմբերի 15-ի իր նամակում տեղեկացնում է դրանից շուրջ քսան տարի առաջ Ֆիլիպուպոլսում հիմնված կաթոլիկական հոգևոր առաքելության մասին։ Այն բաղկացած էր եպիսկոպոսից և մի քանի քահանաներից, որ ներկայացնում էին պավլիկյանների (կաթոլիկ բուլղարների) հոգևորականությունը։ Տեղական պավլիկյաններից քահանաները երկուսն էին, Հոռմում՝ «Propaganda fide»-ի հաշվին կրթություն ստացած, մնացածները Հոռմից ուղարկված իտալացիներ էին, որոնք նյութական օժանդակություն էին ստանում նաև Ֆրանսիայից։

Ն. Գերովի 1862 թ. ապրիլի 18-ի՝ իշխան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն պրած նամակից պարզվում է, որ Ֆիլիպուպոլսի ոչ բոլոր պավլիկյաններն էին դարձել կաթոլիկության, նրանցից ոմանք դեռ XIX դ. սկզբում շարունակում էին դավանել իրենց պապերի հավատքը։ «Ֆիլիպուպոլսում ունիատներ չկան, — գրում է հյուպատոսը, — «Courrier d'Orient» թերթի թղթակիցը իզուր է պավլիկյաններին ունիատ համարում։ Պավլիկյանները, — շարունակում է նա, — անհիշելի ժամանակներից օտար, անծանոթ հավատք էին դավանում, նրանք կարող էին ուղղափառ (պրավոսլավ) դառնալ, բայց հույն հոգևորականությունը այդ ուղղությամբ ոչինչ չարեց, և ահա, սրանից քառասուն տարի առաջ, ավստրիական կառավարության կարգադրությամբ այնտեղ նրանց համար Հոռմից ուղարկվեցին քահանաներ, որոնք նրանց կաթոլիկ դարձրին...։ Այդ պիսի պավլիկյաններ կամ կաթոլիկ բուլղարներ կան միայն Ֆիլիպուպոլսի (մինչև 7.000 հոգի) և Սվիշտովի գավառներում, ապա նաև Վալախիայում, բայց մինչև օրս չունենք և ոչ մի փաստ, որ որևէ ուղղափառ բուլղար հարած լինի նրանց»⁸⁶։

Ն. Գերովը նույն պատկերն է նկարագրում և Սլավոնական բարեգործական կոմիտեին 1869 թ. դեկտեմբերի 15-ին ուղարկած նամակում, ցույց տալով, որ «կաթոլիկական հոգևոր միսիան հիմնադրվել է Ֆիլիպուպոլսում շուրջ քառասուն տարի առաջ, սակայն մինչև օրս չի եղել մի դեպք, որ որևէ ուղղափառ (պրավոսլավ) կաթոլիկություն ընդունի»⁸⁷։ Դա ի միջի այլոց այն պատճառով, որ անհայտ ծագումով պավլիկյանները իրենցից ներկայացնում են բունալոթյան տականքները և հասարակական աստիճանակարգում դեռ այժմ էլ գտնվում են բոլորից ցածր, որով պավլիկյան դառնալ՝ նշանակում է նվաստանալ»⁸⁸։

«Propaganda fide»-ն շարունակում էր իր հոգևորական ակտիվ գործունեությունը։ Ն. Գերովը 1864 թ. հունվարի 13-ին գրում է իշխան Ն. Պ. Իգնատևին, որ պրոպագանդան Ֆիլիպուպոլսում ֆրանսիացի Գալաբարի ղեկավարությամբ արդեն բացել է արական ուսումնարան, որտեղ, ըստ ծրագրի, բուլղարներ պիտի ուսանեին, ավելացնելով, որ ուսումնարանը փոխարինել է նախկինում պավլիկյանների (կաթոլիկ բուլղարների) դպրոցին։ Բայց քանի որ բուլղարները տվյալ պահին չեն մասնակցում դասերին, Ֆրանսիայից ժամանած ուսուցիչները սկսեցին ֆրանսերեն լեզու դասավանդել բուլղարներն կարողալ իմացող պավլիկյան երեխաներին, չմոռանալով մի անգամ ևս ընդգծել, որ պավլիկյանները մինչև օրս բնակչության ցածր խավերից վեր չբարձրացան»⁸⁹։

⁸⁵ Կազմակերպվել էր 1858 թ. այն կյանքի կոչողը հարավային սլավոնների շրջանում լատինա-ճիդլիտական և քաղաքական պրոպագանդը տարածելու, սլավոնների շրջանում Ռուսաստանի ազդեցությունը չեղոքացնելու նպատակ հետապնդող Արևմտյան Եվրոպայում առաջացած ընկերություններն էին։

⁸⁶ Նույն տեղում, էջ 281։

⁸⁷ Այսինքն՝ պավլիկյան դառնալ։

⁸⁸ Документи за Българска история, т. I, с. 512.

⁸⁹ Նույն տեղում, էջ 339։

Ֆրանսիական պրոպոգանդը 1866-ի վերջին Ֆիլիպուպոլսում արդեն բացում է և իգական ուսումնարան: Ե՛վ արական, և՛ իգական ուսումնարանների շենքերը կառուցվեցին քաղաքի «պապիկյան թաղամասում»⁴⁰: Ուշագրավն այն է, որ այդպես ստորացած վիճակում գտնվող պապիկյանները այլևս չէին ուղում կրել բուլղարական հասարակության շրջանում կշտամբական դարձած ինքնանվանումը: Ըստ Գերովի 1869 թ. ապրիլի 2-ի՝ Իգնատևին գրած նամակի, «անհիշելի ժամանակներից Ֆիլիպուպոլսի սանջակում ապրող պապիկյանները դիմեցին տեղական (թուրքական) իշխանություններին՝ խնդրանքով, որ պետական փաստաթղթերում պապիկյան անունը այսուհետև փոխարինվի «կաթոլիկ բուլղարներ» անվամբ, քանզի... պապիկյան անունը դարձել էր նախատա-կան»⁴¹:

Այսպիսով, VII—XII դդ. Բյուզանդիայի համար սարսափադրու սլավոնիկյանները, որոնք անգլիացի նշանավոր բյուզանդագետ է. Գրեքոնի ասելով «սասանեցին Արևելքը և լուսավորեցին Արևմուտքը», XIX դ. վերջում այնպիսի թրշվառ վիճակում հայտնվեցին, որ ուղում էին հրաժարվել իրենց մականունից անգամ:

Պապիկյանների դիմումը տրվել էր մոթթաշերիֆ (սանջակի կառավարիչ) Աթա բեյին, քաղաքական տեսակետից հեռատես մի անձնավորության, որ Ն. Գերովի հետ սերտ հարաբերություններ էր հաստատել: Նա Ն. Գերովին ասում էր, թե հեռավոր, արևմտյան պետությունների հետ Թուրքիայի հաստատած բարեկամությունը ոչ մի օգուտ չի տալու, թուրքերի համար նախընտրելի է ջանալ մոտենալ ռուսներին: Զրույցներից մեկի ժամանակ, երբ խոսք բացվեց պապիկյանների մասին, որոնց պաշտպանությամբ հանդես էր գալիս Ֆիլիպուպոլսի ֆրանսիացի փոխհյուպատոսը, կարծես Ֆրանսիայի հպատակները լինեին, Աթա բեյը Ն. Գերովին վստահեցրեց, թե իրենց այսուհետև բուլղար-կաթոլիկ անվանելու մասին խնդրանքը ինքը վերադաս մարմիններին այնպես պիտի ներկայացնի, որ մեծավի: Այդպես էլ եղավ: Դա բոլորի համար միանգամայն անսպասելի էր, քանզի թուրքական կառավարությունը կաթոլիկների հանդեպ միշտ էլ ընդառաջող էր⁴²:

Բացի Ն. Գերովից, Բուլղարիայի սլավոնիկյանների մասին վկայում է և Բուլղարիայի Ռուսուկ (Ռուսն) քաղաքի ռուսական հյուպատոս Մոշինը: Նա 1875 թ. փետրվարի 25-ին Ն. Գերովին հղած իր գաղտնի նամակում պրում է դեռևս «Relazione»-ում հիշվող Նիկոպոլսի սանջակի Բելինա գյուղի սլավոնիկյանների մասին: «Ինձ վստահված գավառի Բելինա վայրում բնակվող պապիկյանները երկրորդ անգամ վոնդեցին կաթոլիկ քահանաներին՝ նրանց անտանելի անբարոյականության համար և որոշեցին մեկընդմիշտ վերջ տալ Հոռոմից իրենց ուղարկվող օտարազգի նման հովիվներին, ուղում են ունենալ բուլղար ունիթոն քահանաներ, որոնք պատարագը կմատուցեն պապիկյաններին հասկանալի լեզվով: Մի քանի ամիս առաջ նրանք նույն ոգով դիմեցին մեծ վեզիրին, բայց իրենց դիմումը մինչև օրս մնաց անպատասխան: Երկրորդ անգամ իտալացի հայրերին վոնդեց հետո, պապիկյանները նման խնդրանքով դիմեցին այստեղի վալիին, որը հավանություն տվեց նրանց ցանկության, իր հովանավորությունը խոստացավ, բայց իրենց ուղած քահանաների գտնելու հարցը դրեց իրենց վրա»⁴³:

Մոշինը Ն. Գերովին փոխանցում է Բելինա գյուղի պապիկյանների խրնդրանքը, որպեսզի իրեն՝ Գերովին վստահված Ֆիլիպուպոլսի գավառում նա իրենց համար որոնի-գտնի ազգությամբ բուլղար ունիթոն քահանա: Մոշինը ավելացնում է. «Բելինան (Relazione-ում՝ Բելիանի), ինչպես Ձեզ հայտնի է,

⁴⁰ Նույն տեղում, էջ 512:

⁴¹ Նույն տեղում, էջ 488:

⁴² Նույն տեղում, էջ 488—489:

⁴³ Документи за българска история т. II. Архив на Найдено Герод, София, 1932, с. 106—107.

շատ մեծ գյուղ է, և պավլիկյանները քահանաներին շատ լավ են վարձատրում»⁴⁴:

Վերջապես, Բուլղարիայի խնդրո առկա ժամանակաշրջանի պավլիկյանների մասին վկայում են և թուրքական աղբյուրները: Պահպանվել է 1866 թ. հունիս-հուլիս թվակիր՝ Ադրիանուպոլսի վալիին ուղղված սուլթանական իրադե, որի համաձայն Դիմոտիշկա կաղայի Բուկարդան գյուղի «կաթոլիկ բուլղարներին» (պավլիկյաններին) թույլատրվում է հիշյալ գյուղում 20 արշին երկարությամբ, 15 արշին լայնությամբ և 10 արշին բարձրությամբ նոր եկեղեցի կառուցել⁴⁵:

Այսօր, հարկավ, Բուլղարիայում պավլիկյաններ գոյություն չունեն, նրանք վերջնականապես բուլղարացած են: Հակառակ իրենց ձուլմանը, պատմության մեջ հավանաբար միակ դեպքն է, որ մի աղանդի ներկայացուցիչները 1300 տարուց ավելի գոյատևեն, շարունակեն կրել դեռ VII դ. կեսերից ըսկիզբ առնող իրենց անվանումը, հուշը թողնելով Բուլղարիայի՝ իրենց անունը կրող բազմաթիվ տեղանուններում:

АНОНИМ XVII в. ВАТИКАНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ
БИБЛИОТЕКИ И КОНСУЛ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ В
ФИЛИППОПОЛЕ Н. ГЕРОВ ОБ АРМЯНАХ И
ПАВЛИКИАНАХ БОЛГАРИИ

Р. М. БАРТИКЯН

Резюме

«Описание Болгарии» Анонима, написанное, вероятно, по поручению Propaganda Fide, имело целью представить центры болгарских католиков и прозелитическую деятельность Ватикана в Болгарии. Автор довольно подробно пишет также и об армянах и павликианах, упоминает о городах и селах, численности населения и их занятиях.

Большую ценность представляют донесения в Санкт-Петербург русского консула в Филиппополе Н. Герова, в которых подробно говорится и об армянах и павликианах Болгарии в XIX в., их политической ориентации.

⁴⁴ Նույն տեղում, էջ 107:

⁴⁵ Документи за българска история т. IV. Документи из турските държавни архиви, София, 1942, с. 5.